ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված N ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16-2 պայմանագրում 2020 թվականի փետրվարի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

1.1. Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝
Պայմանագրի 7.5, 7.13:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

25.12.2019թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «13» «02» 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու») մի կողմից, և «Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության անունից 06.03.2019թ. լիազորագրի հիման վրա հանդես եկող լիազորված անձ Կ. Ասատուրյանի, (այսուհետ՝ «Կատարող») մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, հիմք ընդունելով 25.12.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16-2» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»՝ վերտառությամբ հավելված N 2-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	«Յուքոմ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9,
Հ/Հ՝ 900011192151	ՀՎՀՀ՝ 00024873
ՀՎՀՀ՝ 02583241	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1570043102134100
Ղեկավար՝ *Կ. Փոլադյան*	Կորպորատիվ վարչության ղեկավար՝ *Ասատուրյան*
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«25» դեկտեմբերի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16-2» ծածկագրով պայմանագրի
Հավելված N 1
«13» «02» 2020 թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	32411130/502	Ինտերնետային կապի տրամադրման ծառայություններ		97500	146250	195000	243750	292500	341250	390000	438750	487500	536250	585000	585000
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
1	32411130/502	Ինտերնետային կապի տրամադրման ծառայություններ	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	...%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ *Կ. Փոլադյան*

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Յուքոմ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9,
ՀՎՀՀ՝ 00024873
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝
Կ. Մարգարյան

/ստորագրություն/